

Ընդունված է՝

ԲՊՀ հիմնադրամի Թարգմանության և միջմշակութային հաղորդակցման ֆակուլտետի խորհրդի 05.03.2021թ. Հ. 5 նիստի որոշմամբ

ԹՄՀ ֆակուլտետի խորհրդի նախագահ



Ա. Ճանճապանյան

Հաստատված է՝

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 03.06.2021թ. Հ. 11 նիստի որոշմամբ

ԲՊՀ-ի ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ



Կ.Վ. Հարությունյան

**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՍԻԱԿԱՆ ԼԵՉՈՒՆԵՐԻ ԳԻՏԱՌՈՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կանոնադրությունը սահմանում է «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» (այսուհետ՝ ԲՊՀ) հիմնադրամի Ասիական լեզուների գիտաուսումնական կենտրոնի կառուցվածքը, նպատակն ու խնդիրները, գործառույթները, կառավարման, ստեղծման և վերակազմակերպման սկզբունքները, կենտրոնի ղեկավարի գործառույթները:
2. ԲՊՀ հիմնադրամի Ասիական լեզուների գիտաուսումնական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) ԲՊՀ հիմնադրամի Թարգմանության և միջմշակութային հաղորդակցման (այսուհետ՝ ԹՄՀ) ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ԲՊՀ, ԹՄՀ ֆակուլտետի և սույն կանոնադրության հիման վրա:
3. Կենտրոնը միավորում է մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական՝ այն է չինարեն-հայերեն և կորեերեն-հայերեն երկլեզու թարգմանության, ինչպես նաև ասիական այլ լեզուների, մասնավորապես՝ արաբերենի, պարսկերենի, թուրքերենի, եբրայերենի և վրացերենի հմուտ և բարձր որակավորում պրոֆեսորադասախոսական կազմին, կազմակերպում և իրականացնում է ուսումնական գործընթաց, ուսումնամեթոդական, հետազոտական և կազմակերպչական աշխատանքներ, պատրաստում է աշխատաշուկայում պահանջարկ ունեցող չինարեն-հայերեն և կորեերեն-հայերեն երկլեզու թարգմանիչներ:

4. Կենտրոնը ղեկավարվում է ԲՊՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ֆակուլտետի խորհրդի, ռեկտորատի որոշումներով, ռեկտորի հրամաններով: Սույն կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվում են ԲՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

## **II. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

5. Կենտրոնի առաքելությունն է պատրաստել չինարեն-հայերեն և կորեերեն-հայերեն երկլեզու որակյալ և մրցունակ թարգմանիչներ, նպաստել ասիական լեզուների և մշակույթի տարածմանը:
6. Կենտրոնի նպատակն է ապահովել չինարենի և կորեերենի որակյալ և մասնագիտական կրթություն, նաև ասիական լեզուների, այդ թվում՝ արաբերենի, պարսկերենի, թուրքերենի, վրացերենի և եբրայերենի որակյալ դասավանդում:
7. Կենտրոնի խնդիրներն են՝
  - 1) ԲՊՀ հիմնադրամի ֆակուլտետների և ամբիոնների հետ խորհրդակցելով՝ համակարգել ոլորտի ուսումնական պլանի կազմման աշխատանքները և կազմակերպել ծրագրերի և դասավանդվող առարկաների ձևավորման, առարկաների նկարագրերի կազմման աշխատանքները, ուսումնամեթոդական ծրագրերի և նյութերի մշակումն ու իրականացումը,
  - 2) ԲՊՀ հիմնադրամի ֆակուլտետներին և ամբիոններին առաջարկություններ ներկայացնել ասիական լեզուների մասնագիտացման ուղղությամբ ուսանողների ընդհանուր մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը նպաստող առարկայացանկի կազմման վերաբերյալ,
  - 3) աջակցել ԲՊՀ հիմնադրամի համագործակցությանը Հայաստանի Հանրապետության և արտերկրի համապատասխան կրթական և գիտական հաստատությունների հետ:
8. Կենտրոնի գործառույթներն են՝
  - 1) իրականացնել ուսումնական և գիտահետազոտական գործունեություն,
  - 2) մասնակցել ԲՊՀ հիմնադրամի մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ), չափորոշիչների, ուսումնական պլանների և կենտրոնի գործառույթներին առնչվող մեթոդական այլ փաստաթղթերի, նյութերի և ձեռնարկների մշակման գործընթացին, հետևել դրանց դասավանդման ընթացքին, անհրաժեշտության դեպքում վերանայել և համալրել,
  - 3) տրամադրել մասնագիտական եզրակացություններ, խորհրդատվություններ, ինչպես նաև կարծիք՝ ատենախոսությունների, ուսումնամեթոդական ձեռնարկների, մենագրությունների, հոդվածների և գիտամեթոդական այլ աշխատանքների վերաբերյալ,
  - 4) կազմակերպել սովորողների մասնագիտական ուսուցման գործընթացը,
  - 5) ապահովել կենտրոնի հետազոտական և պրոֆեսորադասախոսական կազմի

- մասնագիտական շարունակական զարգացման և վերապատրաստման գործընթացները,
- 6) կազմակերպել և իրականացնել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի և թեզերի թեմաների քննարկումներ,
  - 7) կազմակերպել ուսանողների պրակտիկան,
  - 8) կապեր հաստատել Հայաստանի և օտարերկրյա կրթական հաստատությունների հետ և համագործակցել կնքված պայմանագրերի շրջանակներում,
  - 9) մասնակցել ասիական լեզուների ուսումնասիրության վերաբերյալ հանրապետական և միջազգային քննարկումներին, գիտաժողովներին,
  - 10) ԲՊՀ հիմնադրամի ուսանողության համար կազմակերպել ուսումնասիրվող լեզուներին վերաբերող դասընթացներ, կինոդիտումներ, էքսկուրսիաներ, ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ,
  - 11) իրականացնել ծրագրեր ԲՊՀ հիմնադրամի միջազգային համագործակցության շրջանակներում,
  - 12) ստեղծել ուսումնական և ուսումնամեթոդական գրականություն և ձեռնարկներ, ժողովածուներ, մենագրություններ և դասագրքեր,
  - 13) մասնակցել համալսարանի իրականացրած մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին,
  - 14) շրջանավարտների և գործատուների հետ ապահովել հետադարձ կապ,
  - 15) իրականացնել ներամբիոնային գործունեությանն առնչվող որակի ապահովման մեխանիզմների կիրառումը:

### III. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Կենտրոնը ստեղծվում է տվյալ մասնագիտությամբ ուսանողական համակազմի, ուսումնական համապատասխան բեռնվածության և հինգից ոչ պակաս պրոֆեսորադասախոսական կազմի առկայության դեպքում:
10. Կենտրոնի կառուցվածքում կարող են լինել կրթական և հետազոտական լաբորատորիաներ, մասնագիտական և մշակութային կենտրոն-լսարաններ:
11. Ասիական լեզուների ԳՈՒԿ-ի կազմում գործում են չինարենի թարգմանչական լաբորատորիան և հետևյալ կենտրոն-լսարանները՝
  - կորեերենի և կորեական մշակույթի,
  - հինդի լեզվի և հնդկական մշակույթի,
  - Եգիպտոսի անվան արաբերենի և արաբական մշակույթի,
  - պարսկերենի և պարսկական մշակույթի,
  - վրացերենի և վրացական մշակույթի,
  - Ֆրանց Վերֆելի անվան եբրայագիտության,
  - չինագիտության:
12. Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունման պայմաններն ու կարգը սահմանվում են «Վ. Բոյուսովի անվան պետական

- համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների ընդթափանցների, պաշտոններին հավակնորդների մրցութային ընտրության և պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոններում նշանակման կարգ»-ով:
13. Կենտրոնը պետք է ունենա ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-Ն որոշմամբ սահմանված ժամկետներով պահպանմանը ենթակա պարտադիր փաստաթղթեր՝
- 1) ուսումնամեթոդական, գիտահետազոտական և կազմակերպչական աշխատանքների տարեկան պլանները և դրանց վերաբերյալ հաշվետվություններ,
  - 2) Կենտրոնի անձնագիրը, իր պրոֆեսորադասախոսական կազմերի ժամահաշվարկ և տարեկան ուսումնական բեռնվածություն, ուսումնական պլան,
  - 3) Կենտրոնի նիստերի արձանագրություններ և որոշումների հիմքերը,
  - 4) Կենտրոնի գործունեության ինքնավերլուծություն,
  - 5) պրակտիկաներին վերաբերող փաստաթղթերը, այդ թվում՝ պրակտիկաների հաշվետվություններ,
  - 6) դասալսումների փաթեթներ,
  - 7) գիտական և ֆակուլտետի խորհուրդների՝ Կենտրոնի գործունեությանը վերաբերող որոշումներ:

#### IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

14. Կենտրոնի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է կենտրոնի ղեկավարը:
15. Կենտրոնի ղեկավարը աշխատանքի է նշանակվում և ազատվում ԲՊՀ հիմնադրամի ռեկտորի հրամանով՝ ԹՄՀ ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ:
16. Կենտրոնի ղեկավարը՝
- 1) ղեկավարում է Կենտրոնի ուսումնական, գիտահետազոտական, մեթոդական և կազմակերպչական աշխատանքները,
  - 2) ներկայացնում է Կենտրոնը համալսարանի այլ մարմիններում Կենտրոնի գործունեությանն առնչվող հարցերի քննարկման ժամանակ,
  - 3) վարում է Կենտրոնի նիստերը,
  - 4) ի պաշտոնե ֆակուլտետի խորհրդի անդամ է,
  - 5) իրականացնում է Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածությունների և Կենտրոնի աշխատողների պարտականությունների բաշխումը, վերահսկում է դրանց կատարման ժամկետներն ու որակը,
  - 6) իրականացնում է Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի դասալսումներ և կազմակերպում է դրանց քննարկումը,
  - 7) Կենտրոնի նիստին ներկայացնում է առաջարկություններ Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման համար մրցույթների կազմակերպման վերաբերյալ,

- 8) ԹՄՀ ֆակուլտետի դեկանին է ներկայացնում առաջարկություններ Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմում փոփոխություններ իրականացնելու և արտամրցութային կարգով պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնի համալրման մասին,
  - 9) ԹՄՀ ֆակուլտետի խորհրդին է ներկայացնում Կենտրոնի գործունեության տարեկան պլանը և հաշվետվությունը,
  - 10) ԹՄՀ ֆակուլտետի դեկանին է ներկայացնում առաջարկություններ Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման և վերապատրաստման գործընթացների վերաբերյալ, համակարգում է այդ աշխատանքները,
  - 11) համակարգում է սովորողների ուսումնագիտական գործունեությունը,
  - 12) պատասխանատվություն է կրում Կենտրոնի աշխատանքի կազմակերպման, ներքին կարգապահական կանոնների պահպանման համար,
  - 13) ԹՄՀ ֆակուլտետի դեկանին է ներկայացնում առաջարկություններ Կենտրոնի աշխատակիցների պարզևատրման և խրախուսման, ինչպես նաև աշխատակիցներին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ,
  - 14) ԹՄՀ ֆակուլտետի խորհրդի հաստատմանն է ներկայացնում առարկայական նկարագրերը և/կամ ծրագրերը,
  - 15) հաշվետու է Կենտրոնի, ԹՄՀ ֆակուլտետի, ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհուրդներին,
  - 16) կազմակերպում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը և արդյունավետ աշխատանքը,
  - 17) ծրագրավորում է Կենտրոնի կողմից իրականացվող ուսումնական-գիտահետազոտական աշխատանքները,
  - 18) ֆակուլտետների խորհուրդներին առաջարկություններ է ներկայացնում ուսումնական ծրագրերի, ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների արդյունավետության և դրանց իրականացման վերաբերյալ,
  - 19) ֆակուլտետների դեկաններին առաջարկություններ է ներկայացնում ուսումնական պլանների և առանձին առարկաների դասավանդման մեթոդի ու դասախոսների թեկնածության վերաբերյալ:
17. Կենտրոնը իր կոլեգիալ որոշումները ընդունում և իրականացնում է Կենտրոնի նիստերի ընթացքում:
  18. Ուսումնական տարվա ընթացքում Կենտրոնը գումարում է առնվազն 8 նիստ՝ ըստ աշխատանքային պլանի:
  19. Կենտրոնի նիստում որոշումներ կայացնելիս ձայնի իրավունք ունեն Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները: Կենտրոնի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են նաև ուսումնաօժանդակ կազմը, ինչպես նաև հրավիրված մասնագետներ, գործատուներ և շրջանավարտներ:

20. Արտահերթ նիստեր կարող է գումարվել Կենտրոնի ղեկավարի, բուհի ռեկտորի, պրոռեկտորների, ֆակուլտետի ղեկանի նախաձեռնությամբ, ինչպես նաև Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի 2/3-ի պահանջով:
21. Կենտրոնի նիստի որոշումներն ընդունվում են կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստն իրավազոր է, եթե մասնակցում է կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի 2/3-ը:
22. Կենտրոնի նիստում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, եթե կենտրոնի կողմից փակ քվեարկություն անցկացնելու վերաբերյալ որոշում չի կայացվել:
23. Կենտրոնի նիստը՝
  - 1) առաջարկություններ է ներկայացնում Կենտրոնի աշխատակիցների և պրոֆեսորադասախոսական կազմի թեկնածուությունների վերաբերյալ,
  - 2) առաջարկություններ է ներկայացնում նոր կրթական ծրագրերի մշակման և ներդրման վերաբերյալ,
  - 3) քննարկում է Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական կոչումների տրամադրման հարցը և երաշխավորում թեկնածու(ներ)ին,
  - 4) կարող է ներկայացուցիչներ առաջադրել համալսարանի հոգաբարձուների, գիտական և ֆակուլտետի խորհուրդների կազմերում ընդգրկելու նպատակով,
  - 5) քննարկում և որոշումներ է ընդունում Կենտրոնի գործունեությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ:
24. Կենտրոնը քննարկում և ԹՄՀ ֆակուլտետի խորհրդի հաստատմանն է ներկայացնում՝
  - 1) Կենտրոնի աշխատանքին վերաբերող փաստաթղթերը,
  - 2) իր գծով իրականացվող ՄԿԾ-ները և առարկայական նկարագրերը, Կենտրոնի գործառույթներին առնչվող մեթոդական այլ փաստաթղթեր, նյութեր և ձեռնարկներ,
  - 3) ուսանողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաները, ղեկավարների, խորհրդատուների և գրախոսների թեկնածուությունները:

## **V. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ և ՄԻՋՈՑՆԵՐԸ**

25. ԲՊՀ հիմնադրամը Կենտրոնին ապահովում է համապատասխան աշխատանքային տարածքով, գույքով, սարքավորումներով:
26. Կենտրոնը օգտվում է համալսարանի գրադարանային ֆոնդից և էլեկտրոնային ռեսուրսներից:
27. Կենտրոնի ղեկավարը պատասխանատու է կենտրոնին հատկացված գույքի և սարքավորումների համար: